



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4463

ՅՐԻՆԻ



2181

891.71

0-71

Մարտի 21/21
Համալսարան

գրք-ն
5972
891.71
0-71

ՑՐԻՆԻ

(ՈՍՏՐՐՈՒՄՆԻՈՒՅ)



Ս. ԳՆԱՏԵՐԻՈՒՐԳԻ
Ի. Ն. ՍԿՕՐՈՒՅԻՆԻՍՏԻ
1888

2011

43498

50432-տի

Дозволено цензурою. С.-Петербургъ, 29 марта 1888 года.



36097-66

Типографія И. Н. Скороходова (Надеждинская, № 39).

ՅՐԻՆԻ

Այժման սերունդը փոշի կը դառնայ:
Վանցնեն շատ դարեր, կը գայ նոր սերունդ
Եւ երախտագէտ սրտով ահա նա
Կը յիշատակէ միշտ քո սուրբ անունդ:

Երանի՛ նրան ո՛վ կուի դաշտում
Հայրենեաց համար իր շունչը փչեց:
Ազգակիցների սրտի խորքերում
Վանդնած է նրա արձանը միշտ անկոջ:

(«Յրինի» Ողբ. Վերների, Եր. Ե. Տես. Բ.):

Ամբողջ Ամբաստան տաննիցերորդ դարում՝
դողում էր թուրքերի առաջ:

1453 թւականին էր որ Փաթիհ Աուլ-
թան Մէհէմէտը արիւց Սուստանդինուպոլ-
սին, որը մինչև այդ ժամանակ ուղղափառ Իսլ-
ղանդիաի մայրաքաղաքն էր: Այդպիսով այդ
քաղաքը՝ որ առաջ պատկանում էր քրիստոն-
եաներին, այժմ դարձաւ թուրքերինը, նոր

*

12003

մահմէտական տէրութեան մայրաքաղաքը. և խաչը՝ որն առաջ փայլում էր ս. Սօֆիաի տաճարի զմբէթին վրա, այժմ տեղի տվեց տաճկական կիսալուսնին:

Բայց Թիւրքիան՝ և՛ս առաւել ահարկու դարձաւ քրիստոնեաների համար սուլթան Սիւլէյման Բ-ի ժամանակ:

Այդ խտտասիրտ և ինքնասէր սուլթանը կարծում էր, թէ իր բոլոր փառքը միակ նրա մէջ պիտի լինի, որ ամենքը խոնարհվին և դողան իր առաջ: Նուաճել բոլոր աշխարհը, կազմել մի ահագին մահմէտական տէրութիւն, որի միակ գլուխը լինէր ինքը՝ Սիւլէյմանը,—ահա այդ սարսափելի մարդու միակ ցանկութիւնը:

Նրա ամբողջ կեանքը փառաւոր յաղթութիւնների մէջ էր անցել և իր 44 տարվայ թագաւորութեան ընթացքում մի անգամ էր միայն յաղթվել Վիէնայի մօտ¹⁾, և հէնց այդ օրից երզվել էր վաղ թէ ուշ սաստիկ պատժել գերմանացիներին:

1) Վիէնան այդ ժամանակ գերմանական կայսրութեան մայրաքաղաքն էր:

Հասան վերջապէս սուլթանի ծերութեան օրերը: 1566 թւականին, այն ժամանակ՝ էրբ տեղի ունեցաւ այն անցքը, որը մենք պիտի պատմենք, նա արդէն 70 տարեկան էր:

Տարիքն և անհանգիստ կեանքը սաստիկ ազդել էին նրա վրա. երեսը կնճիռներով ծածկվել էր, շոժը նուազվել, ծերութեան հասակի տկարութիւնները թուլացրել էին նրա հզօր մարմինը, բայց միաքք, ոգին, դեռ առաջվայ պէս զուարթ էին. և ծերունի սուլթանը կամենում էր կնքել իր փառաւոր կեանքը մի այնպիսի քաջագործութեամբ, որով կարողանար զարմացնել ամբողջ աշխարհը ու յետագայ սերունդը. նա կամենում էր, որ իր գործերի յիշատակը այնպէս անսասան ու փայլուն մնայ, ինչպէս անսասան ու փայլուն է արեգակը.....:

Երդումը, որն արել էր ծերունի սուլթանը, էրբ զերմանացիները այնպիսի յանդգնութեամբ դիմադրեցին մեծ մարգարէի փոխանորդին, հանգստութիւն չէր տալիս նրան:

Սուլթանը մի օր Հարցրեց իր անձնական բժշկին, Հրէա Ափիին, թէ

— «Արդեօք քանի՞ տարի դեռ ես նա կեանք կունենայ»:

Ափօթվեցաւ ծերունի բժիշկը այս անակընկալ Հարցումից և մտածութեան մէջ ընկաւ. սակայն զգուշութեամբ և ակնարկներով Հասկացրեց սուլթանին, թէ՛ առողջութիւնը վատացել է, ոյժերը թուլացել են, բայց, և այնպէս, խոստացաւ տասը տարվայ կեանք ևս, եթէ միայն սուլթանը իրան պահպանի, չը յուզվի և հանդիստ անցկացնէ իր կեանքի մնացորդը, վայելելով իր նախորդ յաղթութիւնների փառքը:

Բայց սուլթանը թոյլ չը տվեց ծերուկ բբժիշկին իր շողորթիչ խօսքերը շարունակելու:

— Առի՛ր, ծերուկ, լռի՛ր, բացականչեց նա. դո՛ւ խոստանում ես ինձ տասը տարվայ կեանք՝ եթէ հանգիստ ապրեմ. բայց, մի՞թէ չը դիտե՞ս դո՛ւ, որ սուլթան Սիւլէյմանը առանց գործի չէ՛ կարող ապրել. ես սովոր եմ դժուար ու յանդուգն գործերի և չեմ կամենայ կեն-

դանի դերեզման մաներ: Ինձ Հարկաւոր չէ՛ տաս տարվայ կեանք և հանգստութիւն. մի տարի միայն կապրեմ ես, բայց այդ մի տարվայ ընթացքում կը զարմացնեմ ամբողջ աշխարհը մի այնպիսի յաղթութեամբ, որի նմանը մինչև ցայժմ դեռ ևս տեսնված չըլինի: Ափէնաի աւերակների վրայից օրէնքներ կը տամ ապագայ դարերին և իմ հարուածների տակ կընկնի անհաւատ Գերմանիան. թող համայն աշխարհ իմանայ, որ Մեծն Սիւլէյման մեռնում է և թող հրդեհված Ափէնան լուսաւորէ իմ ճանապարհը դէպի դերեզման:

Այս ասելով սուլթանը խօսքն խորհուրդի կանչեց իր բոլոր վեզիրներին և փաշաներին, որոնց հետ նա շատ յաղթութիւններ էր արել և յայտնեց նրանց Ափէնաի վրա գնալու ցանկութիւնը:

— Արդէն երևու տարի է, որ հռօմայեցոց¹⁾ Մաքսիմիլիան կայսրը հարկ չէ վճարում. նա տիրել է վերստին Տօկաի ամրոցին՝ որը մի

1) Այն ժամանակվայ գերմանացոց կայսրը ասվում էր և հռօմայեցոց կայսր:

ժամանակ իմ հղօր իշխանութեանս էր պատկանում. հունգարիան¹⁾ չէ՛ ուզում մեր մեծ մարգարէի օրէնքները ճանաչել: Այդքանը միայն բաւական է, որպէս զի առանց այլ ևս մի քայլ յետաձգելու, զէնք վերցնվի նրանց պատժելու համար.....: Այսպէս է ցանկանում ուղղափառների տէրը և ոչ ոք չէ՛ կարող ընդդիմանալ նրա հղօր կամքին..... և ամենից առաջ նա կառնի ու կը կործանի հունգարիաի Սիզիդ բերդը:

Չօրապետները աշխատում բայց ի զուր, են, համոզելու համար սուլթանին որ չը գնայ այդ բերդի վրա, դիտել տալով, որ այդ բերդի պաշտպանողը՝ իշխան Նիկոլա Յրինին է, ուղղափառների ռիտերիմ թշնամին, որը անտարակոյս պատճառ կը լինի շատերի կորստեան:

Կնքնահաւան կայսրը ականջ չէ՛ դնում զօրապետներէի խոհեմ խորհուրդներին:

— Ո՛չ ոք չէ՛ կարող շեղել ինձ իմ որոշած ճանապարհից, բացականչում է սուլթանը. ի՞նչ

1) Գերմանիաի հարաւարեւելեան մասը:

պէս կարող է մի որեւիցէ Յրինի արգելք լինել իմ ցանկութեանս: Պիտի Սիէնա զընա՛նք ուղղակի Սիզիդի վրայով. այս է ահա իմ կամքը:

Խորհուրդը միայն լռութեամբ պատասխանեց այդ ահարկու և սպառնալից խօսքերին. և սուլթանի երկու հարիւր հազարից բաղկացած ահադին բանակը ճանապարհ ընկաւ քրիստոնեաների դէմ ծերունի տիրոջ համար՝ վերջին փառք, իսկ իրանց համար՝ անուն ու յողթանակ աշխատելու:

Ո՛չ այնչափ հեռու Դանուբ գետից, որը բաժանում էր թուրքերի և հունգարացիների հողերը, Դրավա¹⁾ գետի ափի մօտ, բարձրանում էր հունգարական Սիզիդ բերդը: Սա շինված էր մասամբ սարի և մասամբ էլ հովետի վրա. քաղաքը բաժանվում էր երկու մասերի. առաջին մասը հին քաղաքն էր, որտեղ էր նաև ամրոցն ու գրեհակը, իսկ երկրորդ մասը նոր քաղաքն էր, ուր անպաշտպան տների մէջ ապրում էին խաղաղակեաց քաղաքացիները:

1) Դրավա գետը Դանուբի ճիւղն է:

Այս բերդի հրամանատարը հունգարացի իշխան Նիկոլա Յրինին էր: Նա յայտնի էր իբրև քաջ և հայրենասէր զինուոր. նրա անունը հռչակված էր բազմաթիւ յաղթութիւնների մէջ թուրքերի դէմ, որոնք նոյն իսկ 1566 թւականին սուլթանի հրամանատարութեամբ անցել էին Վանուր գետը և իրանց հրոսակներով քարուքանդ արել ամբողջ նունգարիան:

Յրինիի ընտանիքը մեծ չէր. նա ուներ մի որդի, որը ծառայում էր կայսերական զօրաբանակում և մի ջահել աղջիկ՝ նեղինէ անունով, որը իր մօր Նվաի հետ ապրում էր ամբողջում:

Այդ երկու կանայքը, ըստ երևոյթին, շատ քիչ էին իրար նմանում: մայրը, ինչպէս արժանի կողակից կռիւններում ծերացած ամուսնուն, երեսայութիւնից սովոր էր պատերազմական փոթորկալից կեանքի բոլոր վտանգներին, և, իր մարդու պէս, պատիւն ու հաւատարմութիւնը դէպի հայրենիք՝ ամեն բանից վեր էր դասում: Աղջիկը, ծնողների

սիրելին, մեծացել էր հայրենական խաղաղ յարկի տակ, մի այնպիսի ժամանակ՝ երբ քրիստոնեաների ու մահմետականների մէջ, դարաւոր անընդհատ կռիւններուց յետոյ, մի առժամանակեայ խաղաղութիւն էր տիրել. մեծացած լինելով զգուանքի և փաղաքշանքի մէջ, նա՝ կարծես թէ ստեղծված լինէր միայն ընտանեկան անվրդով, մեղմ ուրախութիւնների համար, որով պիտի բաղդաւորեցնէր այն մարդուն՝ որը կարժանանար նրա կուսական ջերմ սիրոյն:

Այդ մարդը շատ հեռու չէր. և նա, օրինորդը, սիրեց ջահել, գեղեցկադէմ Նավրինտի Նւրանիչին, իր հօր քաջ և ամենասիրելի սպային:

Ի զուր էր աշխատում նեղինէն ծածկել իր սէրը. մօր զգայուն սիրտը հասկացաւ աղջկայ զգացմունքները և Նվան ուրախութեամբ պատրաստ էր օրհնել նրանց միութիւնը, բայց բացված պատերազմը արդիւք եղաւ այդ ամուսնութեան:

Վաղուց արդէն քաղաքացիները նկատել էին,

որ ամբողջում ու քաղաքում եռանդուն կերպով պաշտպանութեան պատրաստութիւններ էին տեսնվում. թէ ինչո՞ւ համար էին այդ պատրաստութիւնները, — նրանք չը գիտէին և չէին էլ համարձակվում այդ մասին խօսք բաց անել Յրինիի հետ, որովհետեւ լաւ գիտէին, որ նա չէ սիրում իր պատերազմական գործերի մասին խօսելը:

Մի օր, յանկարծ, նա զինված՝ բայց սովորականին պէս հանգիստ, մտնում է կանանց սենեակը և յայտնում է իր կնոջ ու աղջկանը, թէ թուրքերի զօրքը արդէն շատ մօտիկ է քաղաքին:

Հեղինէին այդ լուրը սաստիկ վախեցրեց. մայրը իսկոյն հասկացաւ, որ ամբողջին պաշարումն է սպառնում և, տեսնելով որ ամուսինը կկեղծ է նրանց հանգստացնելու, ասաց նրան.

— Ուղիղն ասան, Յրինի, կարո՞ղ է ամբողջը գիմադրել թէ ոչ: Ղու ինձ լաւ ես ճանաչում. ես արդէն արժանի եմ եղել քո վստահութեան, այդ պատճառով ուզում եմ ճշմարիտն իմաստաւ: Վստահ եղիր, որ քո կինը վտանգներից

վախեցողը չէ': Աս վտանգների սովոր եմ և իմ մէջ այնքան ոյժ կը լինի, որ կարող եմ քեզ նման հերոսի արժանի կին լինել:

— Հանգի՛ստ եղիր, Հեղինէ'. քո հայրը և նրա բարեկամները դեռ մեռած չեն. ուստի որեւիցէ բանից երկիւղ կրելու պատճառ չունեն:

Եւ ուղիղ որ վտանգը մօտեցել էր: Պիւղացիներից մինը, թշնամուց փախչելով, լուր բերաւ որ սուլթան Սիւլէյմանը անթիւ զօրքերով ուղղակի Սիդիդի վրա է գալիս:

Իսկ Եւրանիչը նրա ետեւից ներս մտնելով, յայտնեց, թէ սուլթանը արդէն Ղրավան անցել է և ամբողջ երկիրը սրով և հրով ապականում է:

— Տո՛ւր ինձ, Յրինի, աւելացրեց Եւրանիչը, մի գունդ քաջ ձիաւորներ. սիրտս այրվում է, կամենում եմ կռվել. թո՛ղ տուր ինձ այդ չարագործ զաղամներից հայրենիքի վրէժը առնել:

Հեղինէի սրտածմլիկ աղաղակը եղաւ կրիտասարդի այդ համարձակ խօսքերի միակ պատասխանը:

—Մի տխրի՛, Հեղինէ՛, շարունակեց Լուրանիչը, ինձ կուի դաշտ կանչողը պատիւն է: Այժմ, միայն այժմ կարող եմ քեզ առաջարկել իմ ձեռքը և համարձակ յայտնել քո հօրը՝ որ քեզ սիրում եմ: Աս, բացի այս սրից աւելի, ոչինչ չունեմ: Բայց դ՛ու, ծեր զինուոր, շատ անգամ ես ինձ ասել, թէ քաջ մարդը ամենամեծ պատիւների է արժանի. իմ մէջ կայ ոյժ և արիութիւն, թո՛յլ տուր և ես կուի դաշտում կապացուցանեմ, որ արժանի եմ քո փեսան լինելու:

—Իմ պատասխանը յետոյ կիմանաս,—ասաց Յրինին: Իսկ այժմ ամենից առաւել ինձ հարկաւոր է, քեզ պէս արի զինուորներ ունենալ, որոնց կարողանամ յանձնել Հունդարիաի բաղդը...: Վեր առ հազար հետեւակ և հինգ հարիւր հեծելազօր. թո՛ղ քեզ հետ զնան իմ զօրապետներից ամենահմուտները՝ Սլապին ու Հապրուդովիչ, և նրանց հետ միասին դուրս եկ դու Սիւլէյմանի զըլխաւոր զօրավար Մէհմէտի զիմաց: Քո զնդի պէս փոքրաթիւ զօրքի աջողութիւնը

կախված է միայն յարձակման արագութիւնից: Թո՛ղ թուրքերը իմանան, որ Սիզիդը նրանց թւից չը վախեցաւ: Պահագէք, Աստուած օգնական լինի ձեզ. յաղթանակով վերադարձէք:

Հիացմունքով լսում էր երիտասարդ սպան Յրինիի խօսքերը և, կրք նա վերջացրեց, Լուրանիչը, դիմելով հարսնացուին, ասաց.

—Մնաս բարև, Հեղինէ՛, մի մոռանա՛ յիշել ինձ քո աղօթքի մէջ. քո աղօթքը կը պահպանէ ինձ կուի դաշտում. հաւատացած եղիւր, որ ոչ ոք մեզ իրարից չի բաժանի, և ոչ նոյն իսկ մահը, եթէ Աստուած ցանկանայ մահ ուղարկել մեզ: Ո՛վ որ սիրտ ունի, չէ կարող անդործ մնալ, երբ հայրենիքին վտանգ է սպանում...:

Այս ասելով նա մերկացրեց սուրը և դուրս եկաւ սենեակից. խեղճ թուլասիրտ աղջիկը անշնչացած ընկաւ մօր զիրկը, միայն այն իմանալով, որ իր սիրելին վտանգի է ենթարկվում...:

Տխուր էր Հեղինէն. ծանր նախազգացմունքները մաշում էին նրա սիրտը. ամեն կողմից նա միայն վտանգներ էր երեւակայում իր սի-

րելին համար: Ի բնէ հանդարտ բնութեան տէր լինելով, նա չէր կարող իր մօր պէս աներկիւղ լինել և հաշտվել վտանգով և ահով լեքը կեանքի հետ: Հեղինէն կարող էր թանկազին ամուսին լինել խաղաղ և հանդարտաբարոյ քաղաքացու համար. նա կարող էր առօրեայ ծանր աշխատանքների մէջ նրա համար կատարեալ ուրախութիւն լինել և որպէս ամենաքնքոյշ մայր՝ սնուցանել և մեծացնել նրա մանուկներին, իմանալով միմիայն այն՝ ինչ որ կատարվում է իր տան կողմից տակ և ոչ ինչ դադափար չունենալով այն բոլորի մասին, ինչ որ կատարվում է Աստուծոյ լոյս աշխարհում: Նրա սէրը՝ եսական սէր էր. ինչպէս որ նա ինքը պատրաստ էր իր ամբողջ կեանքը, սիրտը և միտքը նուիրել իր մարդուն, նոյնը ցանկանում էր նա և՛ նրանից իր վերաբերութեամբ: — Ղու սիրում ես Աօրէնցօին, մխիթարելով ասում էր նրան մայրը, միայն ոչ ինչպէս հերոսի, այլ ինչպէս մի քնքոյշ փեսացուի. դու մոռանուս ես, որ ի՛նչքան էլ նա քեզ սիրելու լինի, բայց և այնպէս, նրա համար պստիւր

36097-66

և հայրենիքը աւելի՛ թանգ պէտք է լինի. և ի՛նչքան աւելի մեծ լինի նրա բերած զոհը հայրենիքի և պատւի համար, նոյնքան աւելի մեծ կը լինի նրա անունը և փառքը: Եթէ դու քո հերոս հօր արժանի աղջիկն ես, եթէ դու կը սիրես Աօրէնցօին այնպէս՝ ինչպէս որ պէտք է սիրէ Յրիսիի նման մարդու աղջիկը, այն ժամանակ քեզ կը հրապուրէր ոչ թէ քո փեսացուի երեսի զեղեցիութիւնը կամ թէ լեզուի քաղցրութիւնը, այլ նրա սրտի վեհանձն զգացմունքները և անարատ դիւցաղնական պատիւը: Մինչդեռ մայրը այդպէս մխիթարում էր իր դառն նախազգացմունքներով տանջվող աղջկանը, այդ ժամանակ բազրը նրա համար պատրաստում էր մի այնպիսի մխիթարանք, որ սէր և ոյժ էր ներշնչում նրա թոյլ հոգուն: Եւրանիչը, նրա սիրելի Եւրանիչը, որի համար տերևի պէս դողում էր նրա սիրտը, հէնց առաջին անգամ թշնամուն պատահելով անմահ փառքով պատեց իր անունը: Եւ ճնչին զնդով նա զարմանալի անվեհերութեամբ յանկարծակի յարձակվեցաւ Մահմէտի ահազին բա-




նակի վրա և, շփոթեցնելով թշնամուն, չորս հազար մարդ կոտորեց, իսկ մնացածներին ի փախուստ դարձրեց. փախչողներին շատերը, իրանց մեծ զորապետի հետ միասին, ընկնելով Ճահիճճների մէջ խեղդվեցան. շատերը գերի ընկան և ամբողջ բանակը իր բոլոր հարստութիւններով աւար մնաց երիտասարդ հերոսին:

Բոլոր ծերունի զինւորները, սպաները և մինչև անգամ գերի ընկած թշնամիները գովաբանուեալ էին նրա քաջասրտութիւնը, իսկ Յրինին, ծերունի զինւորը, արտասուքը երևսին, ջերմ կերպով զրկելով երիտասարդ հերոսին, ասեց.

— Բո քաջութիւնը միշտ կենդանի կը մնայ ճայքինէ երգերում, ես ինքս անձամբ առաջարկում եմ այժմն քաջից այն՝ ինչ որ առաջ մերժում էի իմ սիրելի Եւրանիչին. դ՛ու իմ աղջկին էիր ուզում, ա՛ն նրան, արժանի՛ երիտասարդ, և բազդաւոր եղիր:

Երջանիկ հայրը արդէն օրհնում էր իր առաջ չոգած փեսացունին ու հարսին, երբ յանկարծ զբոսից լավեցան նորեկ սուրհանդակի փողի



ձայները: Եմենքը դիմեցին դէպի լուսամուտը և տեսան երիտասարդ սուրհանդակ Պետրոս Բիրլակին, որ կայսրի քաջ սպաներից մին էր. մանելով սենեակը, երիտասարդ սուրհանդակը յանձնեց Յրինին մի ծրար, որը դրօշմված էր կայսերական դրօշմով:

Վայսրի նամակը մխիթարական չէր. ծերունի զորավարը օգնութիւն էր խնդրել, բայց կայսրը միանգամայն մերժում էր. չընայելով որ բոլոր զօրքը ամէն տեղից արդէն հաւաքվել էր Վիէնա, զգոյշ Մաքսիմիլիանի (այն ժամանակվայ կայսրի) կարծիքով մայրաքաղաքը դեռ ևս բաւականաչափ ապահովված չէր, և այդ պատճառով, նա, Մաքսիմիլիանը, իր յոյսը դնում էր քաջ հունդարացիների հաւատարմութեանը վրա, վստահ լինելով, որ նրանք պատրաստ են մեռնել իրանց հաւատի և հայրենիքի համար:

Խոր մտածմունքների մէջ ընկաւ Յրինին...: Վայսրի միտքը հասկանալի էր. Սիզիլ բերդը՝ ինչքան կարելի է, երկար ժամանակ պիտի դիմադրէ՝ թշնամու յարձակման առաջն առնե-

լու համար, որպէս զի կայսերական զօրքը կարողանայ պատրաստվել և բոլոր յոժերով դիմադրել Միւլէյմանի հրոսակներին. Միզիդը՝ յայտնի բան է, պիտի վերջապէս կամ ընկնի, կամ անձնատուր լինի թշնամուն: Այսպէս թէ այնպէս, նա պէտք է փրկարար զոհ լինի հայրենիքի համար, և այդ զոհվելու պատիւը կայսրը առաջարկում է իր փորձված, հաւատարիմ ծառային, իշխան Նիկոլա Յրինիին, և Յրինին պարծենում է այդ պատուով: Նա ամեն մի րօպէ պատրաստ է իրան զոհ բերել հայրենիքին, բայց ի՞նչ անէ արդեօք նա իր գերդաստան՝ կնոջ, աղջկայ հետ. յայտնի բան է, նրանց խնայն պէտք է ուղարկել Վիէնա կայսրի մօտ.....: Բայց նկատելով, որ այսպիսով ժողովուրդը կը վհատի, յետաձգեց նրանց Վիէնա ուղարկելը: Միւսողին է..... թող նրանք էլ մնան..... պարիսպը ամուր է, ժողովուրդը փորձված: Ամբողջ առաջվայ կրօններում արդէն երկու խիստ պաշարումներ զիմացել է: Ծայրայեղ դէպքում զաղտնի անցք կայ, որտեղով նրանք կը կարողանան ժա-

մանակին զուրս գալ: բացի սրանից, ո՞վ է իմանում, զուցէ կնոջ սրտում ևս այնքան յոժ գանվի, որ նա կարողանայ անվախ և փառքով մեռնելու...: Ուրեմն թող նրանք էլ մնան այստեղ: Ո՞վ հայրենիք, այս կուռում ևս ցոյց կը տամ քեզ իմ բոլոր հաւատարմութիւնը: Ես քեզ զոհ եմ բերում բոլորը, ինչ որ ինձ համար թանգ է—աղջկանս և կնոջս.....: Աստուծոյ սուրբ հաւատի համար ոչինչ զոհ ծանր չը պիտի լինի մեզ համար:

Յրինիի կարծիքը իր ամուսնու համար սխալ չէր: Երբ Բիլակին Եվաի ներկայութեամբ խորհուրդ էր տալիս նրան կանանց ուղարկել կայսրի մօտ, Եվան ասաց.

—Ո՞չ Յրինի, ոչ թոյլ տուր ինձ այստեղ մնալ մի ուղարկիր ինձ մի այնպիսի ժամանակ՝ երբ ամուսնուս զլխին փոթորիկ է հաւաքվում: Աինը պարտական է մասնակից լինել իր ամուսնու վտանգին:

—Բայց, իշխանուհի, խօսքը կարեց ծերունի Սլապին, մի մոռանաք, որ գուք աղջիկ ունէք:

—Նա ևս պիտի ապացուցէ, որ զիտէ սիրելի, պատասխանեց դիւցազնուհի կինը:

Եւ Հեղինէն, այդ առաջվայ թոյլ, քնքոյշ և վախկոտ արարածը, այժմ, ոգևորվելով մօր և փեսայի օրինակներէց, իր մէջ մի անյայտ ոյժ զգաց ու ասաց.

—Հայր, աղաչում եմ, թոյլ տուր մեզ մնալ այստեղ:

Ի զուր էին բոլոր զօրավարների ջանքերը, որոնք յորդորում էին կանանց մի առժամանակ հեռանալ ամրոցից:

Յրինին՝ լուռ կանգնած նայում էր, խոյս տալով կնոջ ու աղջկայ հայեացքներից. արտասուքի կաթիլները փայլում էին նրա աչքերում, իսկ կանայքը՝ չոգած նրա առաջ, համբուրելով ոտները, ասում էին.

—Թոյլ տուր, թոյլ տուր մեզ այստեղ մնալ.....:

Յրինին, վերջապէս, այլ ևս չը կարենալով զսպել իրան, պատասխանեց.

—Եյո՛, դուք կը մնաք:

—Իսկ մենք, եղբայրներս, այժմ դառնանք

մեր զործին: Հաւաքեցէք բոլորին հրապարակը, ո՛վ որ կարող է զէնք վերցնել, և ես կը յայտնեմ հրապարակով ձեզ այն ժամանակ կայսրի հրամանը և իմ վերջնական որոշումը:

—Իսկ դու, ամուսինս, բեր իմ պատերազմական զօտիս և դու ինքդ զգեստաւորիր ինձ արիւնահեղ խնջոյքի համար..... օրհասական րօպէն հասել է.....:

Սիզիզի հրապարակը լե էր զինված ժողովուրդով. քաղաքի դռները փակված էին և բոլոր թնդանօթները շարված պարիսպներին վրա: Աշտարակի պահապանը վաղուց էր իմաց տվել, որ հեռում թուրքերի ամբողջ խումբեր են երևացել: Հունգարական հինգ զիւղեր, որոնք շրջապատում էին քաղաքը, այրվում էին..... թշնամիների յարձակումը մօտենում էր: Ամբօխը յուզված սպասում էր իր ծեր զխաւորին: Սպաները միմեանց պատմում էին նրա մասին, որ ոչ մի ժամանակ իշխանին այսպէս հանդարտ և անխռով չէին տեսած: Վերջապէս ահա և նա... բոլոր զօրքը և ժողովուրդը կարծես թէ քարացել էին. հազա-

րաւոր աչքեր ուղղված էին դէպի նա: Նրա աչքերը վառվում էին հրաշալի բոցերով: Նրան ոգևորողը կուրի ծարաւը չէր, այլ այն վճիռը՝ որով նա զիտակցաբար իր կեանքը հայրենիքին զոհ էր բերում: Հանդիստ սպասում է զալու վտանգներին, որոնց առաջին օրինակները տեսնում է նա մօտակայ այրվող գիւղերի ծխի և արիւննափայլ լոյսի մէջ: Նրա այդ զիւցազնական անխռովութիւնը ազդում է նաև նրան շրջապատող բոլոր զօրքի և ամբօրի վրա. և վերջապէս, իշխան Նիկօլա Յրինին սկսեց խօսել զօրքին հետ այսպէս.

«Օրականներ.

«Ռ՛նք, որ այստեղ ժողովված էք, ականջ դրէք ձեր մեծաւորի խօսքերին:

«Թուրքերի սուլթանը ահագին զօրքով գալիս է Սիզիզի վրա. նա սպառնում է կործանել և փչացնել մեր բերդը. եղբայրներ, զինւորվե՛նք քաջութեամբ. մեր արիւնակից եղբայրները դեռ ևս պատրաստ չեն թշնամու առաջը դուրս գալու և այդ պատճառով չեն կարող

մեզ օգնութիւն հասցնել շուտով. բայց նրանք յոյս ունեն, որ հաւատի, հայրենիքի և ազատութեան համար մենք մեր կեանքը չե՛նք խրնայի և մեր սուրբ եկեղեցին անհաւատների ձեռքը չենք տայ: Թշնամու ոյժը մեզ համար երկիւղալի չէ. նրանց զօրքի բազմութիւնը թող չը վախեցնէ մեր աչքերը. մտաբերեցէք, որ ի՛նչքան էլ մեծ լինի ծովը, բայց և այնպէս նա չէ՛ կարող ամուր ժայռը տեղեցը շարժել. մի վախենաք թշնամու բանակից. մեր կողմին են Աստուածը և նրա սուրբ հրեշտակները. ամբողջ քրիստոնէութիւնը երկիւղով և յուսով նայում է մեզ, Աստուծոյ ընտրեալներիս վրա, և աղօթում է, որ ամենակարող օգնէ՛ մեզ յաղթել մեր թշնամիներին. ուրեմն, անվախ գնանք պատերազմ և համարձակ մեռնե՛նք կուրի դաշտում. եթէ Աստուծոյ կամքը այնպէս է, որ ես պիտի ձեզանից առաջ մեռնեմ, այն ժամանակ թող իմ աեղս բռնէ իմ հաւատարիմ բարեկամ և ընկերակից Սլապին. հնազանդիցէք նրան այնպէս՝ ինչպէս հնազանդվում էիք ինձ:

«Այժմ լսեցէք նաև իմ, զուցէ, վերջին կամօքը:»
 «Ո՛վ որ իր մեծի հպատակութիւնն ից զուրս դայ, նա մահովան պատժի պիտի ենթարկվի. ո՛վ որ մի րօպէ անգամ, առանց հրամանի, իրան նըշանակված տեղից կը հեռանայ, նա առանց դատաստանի պիտի մեռնի, ո՛վ որ թուրքերից նամակ կը ստանայ, նա մատնիչ է, — այդպիսիներին կրակում այրեցէք, իսկ նամակը, առանց կարդալու, թուրքերին ձգեցէք. եթէ երկուսը երեքը ձեզանից, վախից գողտնի հաւաքվելով մի տեղ, կը սկսեն իրար հետ փսփսալ, այդպիսիներին կախեցէք. մեր մէջ գողտնիք չը պիտի լինեն. քաղաքի դրան վրա մի մեծ ծիրանի խաչ կանգնեցրէք, իբրև նշան մեր քրիստոնէական հաւատի. թո՛ղ թուրքերը իմանան թէ մենք ինչո՞ւ համար ենք կռվում ու մեռնում: Իսկ ահա ես՝ իբրև ձեր առաջին հրամանատարը, ծուռն կամ չոգում Աստուծոյ առաջ և երգովում եմ հաւատարիմ մնալ ուխտիս. դո՛ւք ևս նոյնպէս երգվեցէք:»

Այս խօսքերը արտասանելով, նա զուրս կ-

կաւ առաջ և ընկնելով ծնկան վրա, շարուս նակեց.

«Աս, իշխան Յրինի, երգվում եմ Աստուծոյ առաջ մինչև իմ վերջին շունչը հաւատարիմ մնալ հայրենիքին և մեր լոյս հաւատին. թո՛ղ նղովված լինեմ ես իմ վերջին մահովան ժամում, եթէ դաւաճանեմ մեր կղբայրական ուխտին և ընկեր չը լինեմ ձեզ, իմ հաւատարիմ հունգարացի եղբայրներիս, թէ յաղթութիւնների և թէ մահուան մէջ: Օ՛ն ուրեմն, դո՛ւք ևս երգվեցէք ձեր սրերի վրա:»

Ի՞նչո՞ր զօրքը, ինչպէս մի մարդ, ծուռն չոգեց. և չորս զլխաւոր զօրապետներն, ի նշան երգման, իրենց սրերը դնելով Յրինիի ոտների վրա, բացականչեցին.

«Երգվում ենք՝ Աստուծոյ և քո առաջ, հաւատարիմ լինել օրէնքին, հայրենիքին ու հաւատին և անտրտուռն ճակատով զնազանդվել քո բոլոր հրամաններին:»

Ի՞նչո՞ր զօրքը և ամբօխը կրկնեցին նոյն երգումը, հաստատ հաւատալով, որ կամ կը

յաղթին այս աշխարհում, և կամ մարտիրոսական պատկեր ստանան միւս աշխարհում:

Պիշերվայ խաւարը արդէն տիրել էր, բայց ոչ սովորականի պէս խաւարը, այլ ծիրանի, որ կարմրատակում էր այրվող գիւղերի լուսից և լուսաւորում էր աղօթող զինուորներին և նրանց սուրերը:

1556 թւականին, օգոստոսի 7-ին, սկսվեց Սիզիզի պաշարումը: Թուրքերի գլխաւոր նրպատակն էր անպատճառ բերդը առնել, որից յետոյ նրանք կարող էին ուղղակի գնալ Ափէնաի վրա և մինչև կայսրի իր բոլոր զօրքերը ժողովելը՝ տիրել նրան: Բայց Սիզիզի առնելը նրանց կարծածից շատ աւելի դժուար էր: Թէև թուրքերը՝ թւով շատ էին և կռվում էին զարմանալի քաջութեամբ, բայց միշտ նրանք իրանց յարձակումների ժամանակ, դեռ ևս քաղաքի պարիսպներին չը հասած, ստիպված էին լինում յետ քաշվել: Ահռ այդ բաւական չէր. քաջ հունգարացիները ստէպ-ստէպ դուրս էին դալիս և բաց դաշտի վրա, անսպասելի արագութեամբ և քաջութեամբ յարձակվելով

թշնամու վրա, անխնայ ջարդում և կոտորում էին նրանցից շատերին:

Սիզիզը ամուր կանգնած էր ինչպէս մի ժայռ՝ որին զարնվում էին թշնամու հրոսակները իրանց բոլոր ոյժերով՝ որպէս ծովու ալիքներ: Նրանց զօրապետները արդէն սկսել էին լքանել սուլթանը՝ որ չէր սպասում մի այդպիսի անակնուկնի դիմադրութեան իր անյաղթ զօրքերի դէմ, և այն էլ մի այդպիսի փոքրիկ ու ճնչին բերդից, ունքերը քաշ էր արել և բարկութիւնից ճաթում էր: Անյաղթ սուլթանի ինքնասիրութիւնը սաստիկ վրդովված էր....: Վերջապէս նա, զիջանելով իր զօրապետների խնդիրքին, համաձայնվեց առայժմ թողնել բերդի վրա յարձակման շարունակութիւնը, մինչև որ մանրամասն տեղեկութիւններ չի հաւաքի գերի ընկած հունգարացի սպայից բերդի ոյժերի և միջոցների մասին:

Այդ սպան՝ քաջ Բիլակինն էր: Առւի ժամանակ եէնիչէրիների թրով սաստիկ վերաւորված, արիւնաքամ, ուշաթափվել, գերի էր ընկել նա, և այժմ՝ գլուխը կապած, պահա-

պաններով շրջապատված, կանգնած էր մարգարէի փոխանորդի առաջ:

— Ասա՛ ինձ, երիտասարդ, ո՞վ ես դու, հարցրեց նրան ուղղափառների հրամանատարը:

— Աս հունգարացի եմ և քրիստոնէայ, ուրեմն քեզ երկուպատիկ աւելի ասելի մարդ:

— Աս մարդկանց առանձին առանձին չեմ ատում: Միւլէյմանը չէ ջօկում իր ծովերի կաթիլները միմեանցից. իմ բարկութիւնս թափում եմ միայն ամբողջ ազգերի վրա. ասա՛ ինձ, ի՞նչ դրութեան մէջ է այժմ Միզիդը:

— Արբ կը տիրես նրան՝ այն ժամանակ և ինքով կիմանաս բոլորը:

— Շնուն, ստրոճկ, բացականչեց սուլթանի մերձաւորներից մէկը. ի՞նչպէս ես համարձակ վում քո տիրոջը այդպէս պատասխանել:

— Շատ կարելի է, որ դու լինես նրա ստրուկը, խօսքը ընդմիջեց երիտասարդը, բայց ես՝ երբէք: Ազատ հունգարացիները խոնարհվում են միմիայն ամենակարող Աստուծոյ և իրենց արքայի առաջ:

Վերիի համարձակ խօսքերը շատ դուր ե-

կան Միւլէյմանին և նա՝ քաջ հասկանալով նրա գերազանցութիւնը, շարունակեց հարցութորձ անել Միլակիին բերդի դրութեան մասին. բայց գերին վերջ տվեց սուլթանի խօսքերին, ասելով.

— Խորհուրդ եմ տալես, քե՛զ, սուլթան, ասեց նա, թողնել Միզիդը: Այս պարխապների տակ դու կը կորցնես քո բազդը. ամուր ուժի առաջ քո խմբերը չեն դիմանայ. Միզիդում մերոնք, ճշմարիտէ, թւով քիչ են, բայց քո երեք հարիւր հազարդ անգամ չէ հաւասարվի իմ մի բուն հայրենակիցներիս հետ: Բոլոր հունգարացիները գիտեն իրանց երկրի ու հաւատի համար մեռնելը. նրանք թուրքերի պէս՝ կատաղի դայրոյթի ժամանակ չեն միայն մեռնում, այլ մեռնում են սառնասիրտ, համարձակ ու հանգիստ...:

— Աւ նրանք բոլորը կը փչանան, բացականչեց սուլթանը, կը փչանան, ինչպէս փչանում է յանդուզն լուղորդը ծովի ալիքներում, և նրանց հետ յաւիտեանս յաւիտենից կը մեռնի նաև նրանց յիշատակը:

— Այ՛ սուլթանն, նրանց յիշատակը չի՛ մեռ-
նի, ընդհատեց նրան համարձակ գերին. նրանց
յիշատակը, ինչպէս յաւիտեանական մշտակայ լու-
սատուն, իր փառքի ճառագայթներով կը լուսա-
ւորէ շատ երկար տարիներ յետագայ սերունդ-
ները: Մըն մեծ ես, Սիւլէյման, քո յաղթութիւն-
ների փառքով. բայց իմացած եղեր դու, երևելի
զօրավոր, հազարաւոր մարդկանց կեանք խաւա-
րող, որ աւելի՛ մեծագործութիւն է մեռնել
հայրենիքի, հաւատի համար և իր մահով փրո-
կել հայրենակիցներին ստրկական նախատալից
շղթաներից. քե՛զ սուլթան, յետագայ սերուն-
դը կը դատէ, ինչպէս հարստահարիչ, և անէծ-
քով կը դատապարտէ. նայի՛ր, քո ստրուկները
դողում են արդէն. իսկ ես՝ թշուառ գերիս,
համարձակվում եմ այսպիսի սարսափելի խօս-
քերը սուլթանի երեսին ասել. այ՛, Սիւլէյ-
ման, կրկնում եմ, քեզ կը դատապարտէ յի-
տագայ սերունդը, որովհետև դու փառքի հա-
սել ես, ամբողջ ժողովուրդներ կոտորելով և
հարիւրաւոր քաղաքներ ու գիւղեր այրելով.
կանչի՛ր քո դահլիճներին և ինձ նրանց ձեռքը

տնւր. ես քո առաջ ասացի այն՝ ինչ որ չէր
համարձակվել ասել քեզ մինչ օրս ոչ որ...:

Բայց սուլթանը չը կանչեց դահլիճնե-
րին. զունաթափ, ինչպէս մեռեալ, պրօշները
բարկութիւնից դողողացնելով նստած էր նա,
խոր մտածմանց մեջ ընկղմվելով. նրա ալեոյ
զլուխը ժամանակ առ ժամանակ տատանվում
էր և աչքերը յամառութեամբ նայում էին
գեանին:

Բոլոր շրջապատողները սարսափից լուի է-
ին. նրանք դողում էին իրանց տեղակալի
մինչև այժմ չը տեսնված զարհուրելի դէմքից.
միայն նա՝ այդ զրեթէ երեսայ հունգարացի
գերին, անվախ կանդնած մարդարէի սոսկալի
փոխանորդի առաջ, ուղիղ նայում էր նրան
և սպասում էր մահի:

Երկար տեւեց այդ ծանր լուութիւնը. վեր-
ջապէս Սիւլէյմանը աչքը դցեց գերու վրա
ու ասաց.

— Բրիտօնեայ, դու ազատ ես. լուսնի ինչ
գործն է, թէ շունը նրա վրա հայտնւմ է. ես

քեզ կեանք եմ բաշխում: նա թանգ է միայն
ինձ պէս մեծ մարդկանց համար. զնա.....:

Բայց քրիստոնեայ գերին մոռնուլման ար-
քայից նուէր չը կամեցաւ ընդունել:

—Չեմ ցանկանայ այն կեանքը, բացական-
չեց Ռիլակին, որ արհամարհելով ես ինձ նուր-
րում: դու պիտի ինձ պատվես, սուլթան,
կամ թէ սպանես:

—Քրիստոնեայ, ընդհատեց նրան սուլթա-
նը, ես վաղուց է, որ մոռացել եմ մարդկանց
յարգելը:

—Ուրեմն սովորի՛ յարգել նրանց այժմ,
բացականչեց գերին՝ զլիսից պոկելով փաթիթը.
Թշնամու զթութիւնը չե՛մ ընդունում: Թող
հոսի իմ արիւնը այստեղ թէ կուրի դաշտում,—
ինձ համար միւսնոյնն է. այսպէս թէ այնպէս ես
հայրենիքի ու հաւատի համար եմ մեռնում:
ուրեմն թող կեցցէ՛ իմ կայսրը և թող փշանան
նրա թշնամիները: Աւ այս խօսքերով արիւնա-
քամ երիտասարդը անկենդան ընկաւ սուլ-
թանի ոտերի առաջ:

Այս անակնուկն զէպքի առիթով սուլթա-

նը չը կարողանալով իրան զսպել, բացականչեց.
«Բախտաւոր է քո հայրենիքը՝ եթէ քեզ պէս
որդիներ շատ ունի»,—և հրամայեց, որ դուրս
տանեն մարմինը:

Շփթփեց սուլթանը. այդպիսի յանդուգն
ընդդիմադրութիւն նա չէր սպասում դերվաճի
կողմից. իմացաւ այդպիսով քարասիրտ բռնա-
կալը, որ կան մարդիկ՝ որոնց մեղանից ամեն մէկը
պէտք է յարգէ: Չը կամեցաւ նոյնպէս սուլթանն
ի զուր ժամանակ կորցնել այդպիսի չնչին բերդը
պաշարելու համար. նա դրա համար չէր իր
կեանքի վերջում սկսել այս պատերազմը, ո-
րով ուզում էր աշխարհ զարմացնել: Որպէս
զէ Սիդիղը նուաճի, նա իր զլխաւոր վէզեր
ու զինակից Մահմէտին կանչելով իրան մօտ,
հրամայեց նրան իշխան Յրինիի հետ հաշտու-
թեան բանակցութիւն սկսել:

—Ասա՛ նրան, առաց սուլթանը, որ ընդ-
դիմութիւնը անօգուտ է, թող նա իր կամ-
քով բերդը ինձ յանձնի և ես տալիս եմ նրան
ի սեպհականութիւն՝ ամբողջ Խրուաթիան և
այնքան դանձ՝ ինչքան նա կը կամենայ. նա կը

լինի իմ բարեկամը և դաճնակիցը. իսկ եթէ չի
 Համաձայնվի, այն ժամանակ բերդը առնելուց յե-
 տոյ, մենք բոլորին էլ կը կոտորենք, ոչ ոքի
 չենք խնայի, ոչ ծերերին և ոչ մանուկներին.
 մեր ծառաների բռնաբարութեանը կենթար-
 կենք նրա կնոջը, աղջկանը.....: Իսկ եթէ
 այն ժամանակ ևս չը Համաձայնվի, առա, որ
 նրա միակ սիրելի որդին դերի է բերված մեզ
 մօտ. և եթէ Յրինին նոյն բոսկին բերդը չը
 յանձնի մեզ, ևս նրա որդու Համար այնպիսի
 տանջանքներ կը հնարեմ, որոնք դեռ ևս աշ-
 խարհումս տեսնված չեն լինի: Կնա և առա-
 ջարկիւր այն գոռոզին, որ թող երկուսից մէկը
 ընտրի. կամ լինել խրուաթների թագաւոր
 կամ թէ տեսնել իր որդու մարմինը պա-
 տառտափած.....: Եթէ այն ժամանակ ևս չը
 Համաձայնվի բերդը տալ, այն ժամանակ և մի-
 այն այն ժամանակ, ևս կը խոստովանվեմ թէ
 մինչև այժմ մարդկանց չեմ ճանաչել:

Մինչ այս մինչ այն ամբողջ Սիզիդ քաղա-
 քը Համարեա թէ քանդվել էր պաշարումից.
 Հին պարիսպները երկար չէին կտրող դիմա-

նալ այլ ևս թուրքերի գնդակներին. ամեն բոսկե
 կարելի էր սպասել, որ ահա պատերը կը թափ-
 վին և, թուրքերը մտնելով քաղաք, կը սկսեն
 կոտորել խաղաղ բնակիչներին. ամուր էր մի-
 այն բերդը իշխանական ամրոցով: Այդ աչքի
 առաջ ունենալով, իշխանը Հրամայեց բնակիչ-
 ներին տեղափոխել իրանց ունեցած-չունեցածը
 այդ բերդը, իսկ քաղաքը այրել, որ թշնամու
 ձեռքը չընկնի: Օհանը էր ծերունի իշխանին
 իր ձեռքով ոչնչացնել այն քաղաքը՝ որը այն-
 պիսի հոգացողութեամբ նա ինքը շէնացրել էր
 իր սիրելի ժողովուրդի բարօրութեան համար.
 բայց վտանգը մօտ է և ալևոր Ալապին ար-
 դէն Հրամայում է նախապէս ամեն տեղ կրակ
 և ձիւթ պատրաստել, որպէս զի իշխանի նշա-
 նով միաժամանակ ամեն կողմից կրակ տրվի
 քաղաքը:

Սանդնած է իշխանը լուսամտի առաջ. նա-
 յում է վերջին անգամ իր ձեռակերտի վրա.
 շատ ժամանակ չէր անցել այն օրից՝ երբ նա
 ծաղկած դրութեան մէջ էր. իսկ այժմ.....
 նայում է իշխանը և մէկը միւսի ետեւից ար-

տասուքի կաթիլները գլորվում են նրա խո-
ժոռ աչքերից.....:

Իսկ սուլթանի ղեկավան Մազմէտը, որը ար-
դէն Հասեղ էր բերդը, մտնում է իշխանի մօտ
և խոստանում է սուլթանի անուկով Հաղարա-
ւոր բարիքներ, միայն թէ նա բերդը յանձնի
թուրքերին:

Հանգիստ լսում է Յրինին Մազմէտի խօս-
քերը և պատասխանում է, ինչպէս վայել է
քաջին:

— Ես Յրինին եմ: ահա իմ պատասխանը
սուլթանին: Եթէ նա ինձ յարգում է, ինչո՞ւ
է ինձանից մասնութիւն պահանջում: Թո՞ղ ամ-
բողջ ուժով առնի և յետոյ՝ ի՞նչ որ ուզում է,
անի. իսկ ես կը կատարեմ այն՝ ինչ որ իմ
պատուի զգացմունքը և պարտքը ինձ պատ-
ուիրում են:

Մազմէտը, որը ղիտմամբ ծածկում էր մին-
չեւ այժմ, պատմեց թէ ի՞նչ է սպասում իշխանի
կնոջ ու աղջկանր, եթէ նա չը համաձայնովի անձ-
նատուր լինել. բայց իշխանը անողորբելի էր:

— Խե՛ղճ թուրք, ընդհատեց նա Մազմէտին՝

դու ղեռ ես մեր կանանց վեհութիւնը չես իմա-
նում, նրանք ղիտեն իր ժամանակին մեռնելը:

Եյն ժամանակ, Մազմէտը՝ տեսնելով որ
ծերունուն չէ՛ գրաւում ո՛չ թաղը և չէ՛ վախե-
ցնում ո՛չ կնոջ և ո՛չ աղջկայ մահը, պատմեց
գերի ընկած որդու մասին և ի՛նչ որ նրան ըս-
պասում էր:

Ծերունին ձեռքերով կրեսը ծածկեց և նրա
շքթուկներից դուրս թռան այս խօսքերը.

«Ի՛մ որդի, ի՛մ Պէտրդ.....ով Տէր Ես-
տուած իմ, դձոն է քո բաժակը.....»:

— Հը՛, համաձայնվում ես որդուդ մահին,
ասաց Մազմէտը, կարծելով թէ վերջապէս
յաղթեց իշխանին:

— Ես վաղուց ամենը վճռել եմ..... Հայ-
րենիքիս ես չե՛մ դաւաճանի. չարչարեցէ՛ք, սպա-
նեցէ՛ք, կտոր կտոր արէք նրան..... Պէտրդը
իմ որդին է, բայց նա պատուով կը մեռնի...:
Եւ այս խօսքերը արտասանելով, ղիմեց նա
ղէպի դուռը ու բացականչեց.

— Արա՛կ տվէք նոր քաղաքը, թո՞ղ այրվի.
Եվ՛ա՛, բարեկամնե՛ր, բոլորեքհանդ եկէ՛ք այստեղ:

Նւ վէզերի առաջ դուրս եկան իշխանի կի-
նը, աղջիկը և հունգարացի զորավարները, ո-
րոնք հարևան սենեակում սպասում էին բա-
նախնայութեան ելքին:

Յրինին՝ մի արտասովոր ոգևորութեան փայ-
լը երեսին, դիմեց դէպի նրանց.

— Բարեկամներ, դուք ինքներդ պատասխա-
նեցէ՛ք այս թուրքին, որը համարձակվում է
առաջարկել մեզ մասնիչ լինել. միթէ՛ մենք
մեր կամքով Աստուծոյ առաջ չերգուեցի՞նք
մեռնել մեր սուրբ հայրենիքի համար:

Բոլոր զորավարները միաձայն բացականչե-
ցին՝— այո՛, մեր կամքով:

— Իսկ դուք, կանայք, պատրաստ էք մեռ-
նելու ձեր պատուի և սուրբ հաւատի համար:

— Նս ուրախութեամբ գերեզման կը մանեմ
քե՛զ հետ, ասաց Նվան:

— Օրինուորի հարսին՝ մահը չէ՛ կարող սար-
սափեցնել, — ասաց Հեղինէն:

Նւ Յրինին զրկեց կնոջն ու աղջկանը:

Այդ ժամանակ քաղաքը արդէն այրվում
էր և հրդեհի ճառագայթները լուսաւորել է-

ին թէ՛ պատուհանները, թէ՛ այդ ապշած և
հիացած պատգամաւորին և թէ՛ դիւցազներին
և դիւցազնուհիներին, որոնք պատրաստ էին
ուրախութեամբ մեռնել հայրենիքի համար:

— Այժմ, վէզի՛ր, ասաց ծեր իշխանը, կա-
րող ես յայտնել սուլթանին, թէ ի՞նչ է մը-
տածում Յրինին: Ասա՛, որ բոլոր ժողովուր-
դը նրա հետ համաձայն է, բայց մինչև սուլ-
թանի բանակի յետ դառնալը այդ այրվող քա-
ղաքը կը յայտնէ նրան, թէ Յրինին՝ մահը
նախատինքից դերագաս է համարում, թէ նրա
համար աւելի թանգ է պատիւը՝ քան թէ աշ-
խարհի բոլոր հարստութիւնները, թէ հայրենիքը
աւելի թանգ է նրա համար՝ քան թէ մինչև
անգամ նրա միակ որդին. այժմ եկէ՛ք և մենք
պատրաստ ենք ձեզ ընդունելու, մեզանից ոչ
ոք կենդանի ձեր ձեռքը չի ընկնի, շղթաները
մեզ չի՛ն ծանրաբեռնի և այս աւերակները մեզ
գերեզման կը լինեն . . . :

Այսպէս պատասխանեց իշխան Նիկոլա Յըլի-
նի սուլթանի մեծ դեսպանին:

Սուլթանին սաստիկ ապշեցրեց թէ Յրինիի

պատասխանը և թէ՛ այրվող քաղաքը, որը պարզ ցոյց էր տալիս, որ պաշարվածները վրձ-ռել են մինչև արևան վերջին կաթիլը ընդդի-մադրել թշնամուն:

Բայց Մահմեդի բերած լուրը միանգամայն խանդարեց 70 տարեկան, առանց այն էլ, տկար, զառամեալ ծերունու առողջութիւնը. սաստիկ յուզված, տենդային կրակով փայլող աչքերը արիւնով լցված, շնչասպառ ձայնով նա հրա-մայեց նորից յարձակումն անել Սիզիլի վրա: Բայց այդ երկրորդ յարձակումն ևս չը աջող-վեց. չաջողվեցան և երրորդ, և չորրորդ, և հինգերորդ յարձակումները: Վերջապէս նոր քաղաքի պարիսպը պայթեցրին: Այն ժամա-նակ Յրիկին փակվեցաւ ամրոցում. բայց, և այնպէս, դարձեալ անհնար եղաւ ախրել քա-ղաքին:

Այդպէս ի զուր տեղն ամբողջ ամիս շա-րունակվում էր պաշարումը:

Սպառվեց սուլթանի վերջին ոյժը, մաշ-վեց նրա կեանքը: Հրամայեց նա բոլոր սպան-վածներին համարել. պատերազմի դաշտում դտան

միայն հինգ հարիւր հունդարացու դիակներ, իսկ թուրքերից արդէն կոտորվել էր մի քանի հազար: Այդ ամենը այնպէս ազդեցին սուլ-թանի վրա, որ բոլորովին յոյս չը կար թէ նա կապրի և օրէցօր սպասում էին նրա մահին. բայց և այնպէս, թէև հազիւ կենդանի, նա կատաղի յուսահատութեամբ կռվում էր մա-հուան դէմ և դեռ ևս յոյս ունէր իր փա-ռաւոր կեանքի վերջին թոյգները պսակել պան-ծալի յաղթութեամբ. թոյլ ձայնով նա դեռ ևս հրամաններ էր տալիս աւելի և աւելի սաստիկ յարձակումներ անել Սիզիլի վրա: Հրամայեց ղլխատել մի քանի վէզլիններին, որոնք՝ իրր թէ մեղաւոր էին սուլթանին առաջ այդ ան-աջողութիւնների համար. այդպիսով նա իր վերջին թոյգները թունաւորում էր իր հա-ւատարիմ ծառաների արիւնով:

Սակայն մահը արդէն մօտ էր. մինչև այժմ, որը իր բոլոր ազգի համար բաղդաւոր օր էր հա-մարված, նա լուր է ստանում, թէ սուլթանի զօրքերը՝ թուլանալով վերջապէս շնորհով բազ-մաթիւ անհետեանք յարձակումների, փախան

պատերազմի դաշտից, թէ սուլթանի դաշ-
նակից Ազիպտոսի փաշան ընկաւ պատերազմի
դաշտում, և թէ մահը ամեն տեղ կոտորում
է թուրքերին. մի խօսքով, մինչև այդ ժամա-
նակ բազմաւոր համարված Թիւրքիաի ան-
յաղթ և ահարկու տեղակալը ամթալի կեր-
պով յաղթված էր: Վաջն սիրտը չը դիմացաւ
այդ վերջին հարուածին. հաւաքելով իր վեր-
ջին յոգեբը, նա դռաց այդ սոսկալի լուրը
բերող վեղերի վրա և հրամայեց, որ նորից յար-
ձակումն անեն. և երբ վեղերը ուղղակի յայա-
նեց թէ զօրքերը չեն կամենում մէկէլ յարձա-
կումն գործել, սուլթանը դաշոյնը խրեց նրա
կուրծքը և ինքը, բարկութենից թուլացած՝
հառաչելով վայր ընկաւ ու մի քանի բօպէից
յետոյ նա արդէն մեռած էր:

Նրեք վեղերների, սուլթանի մահվան մի-
ակ վկաների, առաջ՝ այժս, ընկած էր չարու-
թենից և մահուան չարչարանքներից այլան-
դակված դիակը, որից մի քանի ժամ առաջ ամ-
բաջ աշխարհը դողում էր: Սուլթանը այլ ևս
չը կար, բայց նրա ահարկու ոգին դեռ ևս թագա-

ւորում էր ամբողջ զօրքի վրա. և ահա վեղեր-
ները վճռեցին՝ ծածկիլ զօրքից Սիւլէյմանի
մահը, որպէս զի նրանց սիրտը չը լքանի:
Պաղանի կերպով դեսպաններ ուղարկեցին Ս.
Պօլիս թագաժառանգի մօտ. հազցրին դիակը
թանկագին շորեր, օճեցին անուշահոտ իւղե-
րով և, սուրը ձեռքը տված, մութ ժամանակ
հեռուից ցոյց տուին անկենդան մարմինը այն-
պէս՝ որպէս թէ կենդանի է և գահի վրա է
նստած: Ապստամբված և խաբված զօրքը սար-
սափեց իրա տիրոջից և գնաց վերջին յարձա-
կումը գործելու:

Հին ամրոցին, այդ հունդարական վերջին
պատասպարանի, մօտալուտ կորուստը, որտեղ
փակվիլ էր Յրինին իր գերդաստանով և մի
բուռն քաջերով, միանգամայն անխուսափելի
էր: Իր և ընկերների մասին Յրինին արդէն
վճռել էր՝ նրանք բոլորեքեանն էլ կը մեռնեն,
բայց կենդանի թշնամու ձեռքը չեն ընկնի,
իսկ կանանց մասին նա դեռ ևս տատանվում
էր: Նա թագցրեց նրանց նկուղում. բայց
պաշար հագել մի քանի օրվայ համար էր

մնացած, այն էլ միայն կանանց համար. բացի սրանից, հրք ամբողջ քանդվէր թուրքերի գնդակների հարուածներից, այդ ապաստանարանն ևս անպատճառ պիտի յայտնվէր թշնամիներին. այդ պատճառով վճռեց փրկել Յրինին իր կնոջը և աղջկանը:

Օհրունի Գահրնիկը, նրա մանկութեան դաստիարակը, դտել էր մի ստորերկեայ անցք, որը այդ նկուղեց տանում էր դէպի լիճը:

Եզուց, լուսաբացին, ասաց Յրինին կանանց, դուք այստեղեց դուրս կը գաք. լճից մինչև անտառը հազիւ թէ երկու հարիւր քայլ լինի. իսկ այնուհետև շտապեցէք գաղտնի ճանապարհներով կայսերական բանակը և հաղորդեցէք կայսրին, որ Յրինին ընկաւ, ինչպէս իր հայրենիքին հաւատարիմ որդի, ու Միզիզի աւերակներում փառաւոր գերեզման գտաւ: Հանդիսա եղէք, ևս ամեն բան կը պատրաստեմ, — Եւրանիչը, իմ հեղինէիս փեսացուն, ձեր ուղեցոյցը կը լինի:

Բայց Եւրանիչը, որը իշխանի հետ այդտեղ ներկայ էր, ընդհատեց նրան, ասելով:

— Դո՛ւ, Յրինի՛, ասաց նա, դաստիարակել ևս ինձ դո՛ւ ևս սովորեցրել ինձ սուր ու սուսեր գործածել, դո՛ւ ևս արմատացրել իմ մէջ պատւի ու պարտաճանաչութեան զգացմունքները, դո՛ւ, վերջապէս, ինձ կնութեան ևս տալիս քո աղջիկը, քո անզին դանձը, — և դո՛ւ ի՛նքդ ստիպում ևս ինձ նախատալից յանցանք գործել. ո՛չ, չե՛ս կարող բաժանել քո որդուն ամենաքաղցր երջանկութենից — հայրենիքի համար փառաւոր մահից. ո՛չ, հայր, ևս զինուոր եմ, ևս երգվել եմ, հաստատ մնալ իմ դրօշակին և ևս պիտի մեռնեմ քեզ հետ:

— Ազնիւ երիտասարդ, դու իմ որդին ևս, ուղիղ է. բայց, այնու ամենայնիւ, դու նրանց պիտի ուղեկցես նայի՛ր, այդ խեղճ արտասովող աղջկան, նա քո հարսն է նա քեզանեց սէր է խնդրում ապրի՛ր, որդի՛ս, և բաղբաւորացուր նրան, որը իր սիրտը քեզ է նուիրել:

— Այո՛, ևս նրան բաշխել եմ իմ սիրտը, բայց հայրենիքիս տվիլ եմ իմ պատիւը. այդ վերջին պարսփը՝ ևս ամեն բանից առաջ պիտի

վճարեմ. իմ հոգիս, իմ միտքս, իմ բոլոր զգացմունքներս նուիրված են քեզ, իմ հեղինէ, բայց իմ կեանքը պատկանում է այժմ հայրենիքին. ես այնտեղ՝ միւս աշխարհում յաւիտեան քոնը կը լինեմ, բայց այստեղ՝ այս աշխարհում ես պարտաւոր եմ ծառայելու իմ պարտաճանաչութեան և երդման: Փախէք առանց ինձ մտաբերեցէք ինձ այն բոլորներին՝ երբ ձեր կսկիծը կը մեղմանայ և մի կաթիլ արտասուք նուիրեցէք այն մարդու յիշատակին՝ որը ձեզ այնպէս անկեղծ ու կաթողին սիրով սիրել է.....: Դուք լաց էք լինում..... ես ձեզ վերաւորեցի..... Ե՛հ, հաւատացիր, հեղինէ, որ ես քեզ նոյնպէս սաստիկ եմ սիրում, ինչպէս և դու, և դրա համար էլ հէնց կեանքս զոհում եմ.....

Բայց կանայքը ականջ չը դրեցին ոչ Յրինիին, ոչ Իւրանիչին, հաստատ մնալով իրանց վճռին. նրանք նորից սկսեցին աղաչել իշխանին, որ թոյլ տայ մեռնել հայրենիքի համար, նրանց հետ միասին՝ որոնք իրենց համար այնքան թանկ են և առանց որոնց՝ կեանքը ոչինչ ու-

րակտութիւն չէ խոստանում.....: Նրանց խնդրքները մերժող Իւրանիչը այժմ հպարտութեամբ տեսնում էր թէ յորքան հոգեկան ոյժ է թաղնված այդ աղջկան մէջ, որին նա մինչև այժմ համարում էր միայն ընդունակ ընտանեկան կեանքի խաղաղ ուրախութիւններին, բայց որին սէրը այժմ դիւցազնուհի էր դարձրել.....: Օ՛հր իշխանը չը կարողացաւ դիմանալ այդ մահվան աղերսանքներին և զրկելով կնոջ ու աղջկանը, շնորհակալ էր լինում Աստուծուն, որ Նա, արդարների Աստուածը, այդ կանանց այնպիսի հոգի է տվի: Բայց ոչ Իւրանիչը և ոչ Յրինին դեռ չէին իմանում, թէ ինչպէս մեռնել զիտին այդ թոյլ կանայքը:

Մութ նկուղը լուսաւորված է ջահի լուսով: Յրինին հանգնում է վերջին հանգիսի համար իր ամենալաւ և թանկագին հագուստը, այն հագուստը՝ որով նա դուրս էր եկել ժողովրդի առաջ, երբ առաջին անգամ յաղթում էր թուրքերին Վիէնայի տակ միւսնոյն այդ հագուստով նա պսակվել էր իր առաջին հանդուցեալ կնոջ հետ. այդ հագուստը հագած ունէր նա և երբ

գնում էր Վիէնայի փողոցներով, ժողովուրդից շրջապատված, որը ցնծալից աղաղակներով ողջունում էր նրան—պսակվելու իր երկրորդ, այժմեան կնոջը հետ..... Հինաուուրց ծերունի Զերնիչը, նրա դաստիարակը, ինչպէս սովորաբար հանդիսաւոր օրերում օգնում է հագցնում էր իր տիրոջը,—նոյնպէս և՛ այս անգամ հագցնում էր նրան ու լաց էր լինում:

—Ահա՛, իշխան, ասում է ծերունին, արտասուքը երեսին, ահա թէ ի՞նչ օրի հասայ, կարող էի միթէ կարծել ես, երբ ձեզ զարդարում էի ձեր անթառամ պսակի համար, որ կը զայ ժամանակ՝ երբ պիտի զարդարեմ ձեզ և վերջին արիւնակից ինձոյքին համար. կարող էի միթէ մտածել, որ այս հանդիսաւոր հագուստը ձեզ համար պիտի և՛ թաղման պատան դառնայ.... Ահա՛ ի՞նչ օրի հասայ ես....

—Լաց մի՛ լինի, ծերսէկ, լաց մի՛ լինի, իմ հաւատարիմ Ֆրանց, ընդհատեց իշխանը. դու դեռ մինչև այժմ սրանից աւելի լաւ ինձոյքի համար չես պատրաստել ինձ. դու դեռ չես տեսել այնպիսի յաղթանակ՝ որը ես այսօր պիտի գոր-

ծեմ. այս օրը ինձ համար մեծ օր է, և հէնց դրա համար էլ ես հագնում եմ իմ այս շորերը. երկու անգամ ես պսակվել եմ այս հագուստով, և այսօր երրորդ անգամն է որ պատրաստվում եմ երկնային պսակին արժանանալու. ուրեմն տո՛ւր ինձ իմ սուրբ:

—Ո՛րը, իշխան, ասում է աչքերը սրբելով հաւատարիմ ծերունին:

—Ի՞նչըրը բեր այստեղ, ես ինքս կը ջօկեմ: Իհրաւ Զերնիչը իր տիրոջ բոլոր սրերը և սկսեցին տէր ու ծառայ մտաբերել, թէ նրանցից ո՞րը ո՞ր պատերազմումն է գործ դրվել: Ահա՛ այս սրով Յրինին Իհշթի առաջ էր յաղթութիւն գործել, բայց այսօրվայ համար նա շատ ծանր է. սրանով նա պատերազմել էր Ասէնզի մօտ.... նա հաւատարիմ կերպով էր ծառայել, բայց նա էլ մանր է, իշխանը աւելի լաւ է վեր կառնէ ահա այս թիթե սուրը... այդ ընծայել է նրան Վիէնայի առաջ նրա հայրը. այդ սուրն է տվել նրան առաջին յաղթութիւնը, առաջին պատիւը, և նա՛ այդ սուրը կը տայ նրան այսօր և՛ վերջին պատիւը: Ա՛լ երկար ժամանակ

ձեռքին բռնելով նայում է նրան իշխանը և ապա բացականչում.

—Քե՛զ հետ, իմ ազնիւ թուր, կերթամ ես այսօր վերջին պատերազմ. թող Աստուծոյ կամքը օրհնեալ լինի... կրդվում եմ քեզանով իմ հաւատարիմ սուր, որ ինձ թշնամիները կենդանի չեն վերցնի, չեն քաշ տայ ինձ իրանց բանակը ի խայտառակութիւն իմ այն սակաւաթիւ ընկերների՝ որոնք զեռ ևս կենդանի են և որոնք այժմ ինձ հետ միասին պատերազմի են գնում, և այս կրդումը ես այնպէս սուրբ կը պահեմ, ինչպէս սուրբ է Աստուածը և մեր սուրբ հաւատը:

—Իսկ ո՞ր զրահը կը հրամայէք տալ — հարցրեց Գերնիկը:

—Ինձ զրահ հարկաւոր չէ՛. ես դուրս կը գամ թշնամու առաջը առանց զրահի, բաց կուրծքով. ես ուզում եմ մահուան վերջին րօպէում պատերազմի դաշտում լինել նոյնպէս ազատ, ինչպէս և խնջոյքում, ուզում եմ նայել մահուան երեսին առանց ծանր զրահի:

Եւ մերժելով զրահը, իշխանը կապեց միայն

պինդ լայն դօտին, ու թաղցրեց նրա մէջ ամբողջ բանալիները և հարիւր ոսկի:

—Շ ները թող չասեն, ասաց իշխանը, դրնելով ձեռքը իր ծերունի դաստիարակի ուսին, որը ժպտում էր արտասուքը արանքին. թող չասեն շները, որ ի զուր տեղեց աշխատեցին նրանք իշխան Յրինիի շորերը հանելու. ես կենդանի թշնամիների ձեռքը չեմ ընկնի:

Եւ այդ պերձ ու շքեղ հագուստով ու փայլուն դէմքով իշխան Յրինին դուրս եկաւ իր կնօջ ու աղջկայ մօտ: Աինը ճանաչեց իսկոյն հագուստը, մտաբերեց իր հարսանիքը և սկսեց հեկեկալ: Ամուսինը զարմանալի հանգստութեամբ շնորհակալ եղաւ իր թանկագին ամուսնուն այն րօպէների համար, որը նա պարզեւել էր իրան, քնքուշութեամբ մխիթարում էր նրան այն մարտիրոսական պսակի վիհութեամբ, որը նրանք միասին պատրաստում էին իրանց համար, և ապա դառնալով դէպի իր աղջիկը, որը ափսոսում էր կեանքի համար, նա շարունակեց.

—Մի վիճի Աստուծոյ հետ, աղջիկս, շրնորհապարտ եղի՛ր նրա հայրական ողորմա-

Տուրթեանը համար, որ Նա այդպիսի դաժան
 ժամանակներում մեր սրտերը ոսկու նման զուտ
 և մաքուր պահեց: Միայն տառապանքների մէջ
 է հասունանում մարդուս մեծութիւնը, մտաբե-
 րի՛ր այն՝ ինչ որ սովորել ես պատմութեան մէջ,
 բոլոր հերոսները, անցած ժամանակների բոլոր
 երևելի մարդիկները, որոնցով աշխարհս մինչև
 այժմ հպարտանում է, բոլորեքեանը դառն նե-
 դութիւններ կրելով են անմահացել, միմիայն
 կուր մէջ կարելի է յո՛ժը փորձել, միմիայն զըժ-
 բաղդութիւնն է մեծ սրտեր ստեղծում:.... Ապա
 դառնալով իր կնօջը ասաց.

— Մէկ էլ ե՛րբ կը տեսնվենք քեզ հետ, իմ
 թշուառ կողակից:

Նվան պատասխանեց.

— Այնտեղ՝ երկնքում դու կը հանդիպես
 քեզ պէս քաջ ամուսնուն արժանի կնօջդ, մի-
 այն այնտեղ կը սպասեմ ես քեզ, և իմ վճիտը
 հաստատ է:

— Իսկ մեր աղջկանը հետ ի՞նչ կը լինի, — ա-
 սաց Յրինին, չը կարողանալով այլ ևս իրան
 զսպել:

Աղջիկը պատասխանեց.

— Իմ մասին մի՛ մտածիր, հայրի՛կ. ես ձե-
 դանից առաջ կը լինեմ երկնքումը, իմ փեսան
 չե՛ մերժի ինձ իր վերջին համբոյրը, և նա գի-
 տէր թէ ի՛նչ էր ասում: Այդ բօպէին նրանք
 անցան նկուղը, նոյնպէս առանց զրահի:

Իսկ Սլապին և Հապրուդովէչը, այդ միակ
 մնացած զօրավարները, և երիտասարդ Եւրա-
 նիչը յայտնեցին Յրինիին թէ դեռ ևս կեն-
 դանի մնացած խումբը հաւաքվել է դրանը և
 ուզում է վերջին անգամ իր դլխապետին տես-
 նել:

Իողորժուն ձեռքերով ծեր իշխանը օրհնեց
 իր կնօջ ու աղջկանը, ավից նրանց վերջին համ-
 բոյրը, ու միայն այստեղ, չը կարողանալով իրան
 զսպել, լաց եղաւ. բայց դրսից այդ բօպէ լսելի
 եղան փողի և թմբուկների ձայներ և նա հապ-
 ճեպով գրկելով աղջկանը, որին այդ բօպէում
 միայն նշանեց Եւրանիչի հետ, արագ քայլերով
 դուրս գնաց իր կնօջ և զօրավարների հետ, թող-
 նելով որ նշանվածները ազատօրէն իրարու
 հետ մնաս բարե ստեն:

Մնաս բարեւը երկար չը աւեց, հօր և մօր ղիւցաղնական օրինակը, սիրելի փեսին օրինակը, որ հայրենիքի համար մեռնելու էր գնում, ինչպէս ուրիշները հարսանիքի կը գնան, այդ թոյլ օրիորդին այնպիսի հոգեկան ոյժ էր ներշնչել, որ նա պատրաստ էր զոհել իր բոլոր անձը: Ապագան խոստանում էր նրան միայն գերութիւն իր բոլոր նախասինքներով միասին, և նա աւելի բարւօք համարեց մի քիչ վաղ մեռնել այն մարդու ձեռքով, որին նա այնքան սրտազին սիրում էր: Որպէս զի թշնամու ձեռքը չընկնի, նա աղաչեց իր փեսացուին նրա ձեռքով սպանել իրան: Փեսան երկար չը տատանուեց, նա օվեց ձեղինէին իր առաջին և վերջին համբոյրը ու խրեց դաշոյնը նրա սրտի մէջ. այդպիսով նա փրկեց իր սիրեցեալի պատիւը. ձեղինէն մեռաւ, օրհներով իրան սպանողին, օրհներով իր մօրը, հօրը և հայրենիքը, մեռաւ նա իր փեսայի գրկում... իսկ վերջինս, գրկելով նրա մարմինը, տարաւ ու թաղցրեց նրան մի դաղանի խոր մառանում, ուր ոչ ոք չը կարողանայ մինչև

անգամ հետքը դանել, իսկ ինքը ամուր և հաստաս քայլերով դուրս եկաւ ամրոցի դուռը:

Այդ ժամանակ դրանը արդէն հաւաքվել էին բոլոր կենդանի մնացածները, որոնք ընդունակ էին դեռ զէնք կրելու. Ավան ևս այդտեղ էր ջահը ձեռքին՝ պատրաստ վերջին քաջազործութեան. զինուորներից մէկի ձեռքում ծածանվում էր սրբազան դրօշակը. կրկու մեծ թնդանօթ պատրաստ էին քաղաքի դռների առաջ, որոնք դրված էին շարժական և դեռ նոր կառուցած կամուրջի վրա: Ամբոխը նկատելով, որ Յրինին կամենում է խօսել, լռեց իսկոյն և իշխան Աիկօլա Յրինին սկսեց իր վերջին ճառը իր զինակիցներին:

«Բարեկամներ:

«Վերջին անգամ, մահից առաջ, լսեցէք թէ ի՞նչ կասէ ձեզ ձեր զօրավարը. դուք չը դաւաճանեցիք ձեր երգման, դուք ազնւարար ծառայեցիք ձեր հայրենիքին և մատնիչներ ձեր մէջ չեղան. չը կայ ոչ մէկը ձեր մէջ՝ որը պատրաստ չը լինի ուրախութեամբ մեռնել հայրենիքի հա-

մար. դրա համար, եղբայրներ, շնորհակալ եմ ձեզանից. այժմ հասել է, ո՞վ ընկերներ, մեծ և օրհասական ժամը. գնե՛նք մեր մահով մարտիրոսական անթառամ պսակը, մինչև այժմ, մենք բաւական աջողակ կերպով կռվում էինք մեզանից թւով անհամեմատ դերազանց թշնամուհետ և սուղթանը այստեղ կորցրեց քսան հազար ընտիր զօրք,—բայց այժմ մեզ դէմ բարձրացել է մի ուրիշ թշնամի, որին չէ կարելի յաղթել ո՛չ ուժով և ո՛չ էլ քաջութեամբ. մեր ամուր պարսպի խրամանները խորտակված են և հրդեհը լավում է ամրոցը. սոսկալի տարրն է կռվում այժմ մեզ հետ. մենք միայն մի օրվայ ուտիրու պաշար ունենք, նորանից յետոյ մենք կամ պիտի այրվենք, կամ մեռնենք քաղցածութիւնից և կամ թէ պիտի անձնատուր լինենք. բայց նախատիւքի գնով մեր կեանքը չե՛նք գնի. ազնիւ մարդը հաւատարիմ կը մնայ հայրենիքին. գնանք, եղբայրներ, գնանք դէպի բաց դաշտը, դէպի մահուան հանդէպ, զէնքը ձեռներիս» :

Բողոքի միաբերան հիացմունքի թնդիւնները պատասխան եղան Յրինիի խօսքերին:

—Ո՛ւր է շեղինէն, հարցրեց Յրինին Եւրանիչին, որը այդ լուսկին նկուղեց դուրս էր դալիս:

—Նա երկնքում մեզ համար պսակ է պատրաստում. շուտով, հայր իմ, կը տեսնվենք նրա հետ,—պատասխանեց Եւրանիչը:

—Իսկ դո՛ւ, Եվան, ինչ տեսակ ես ուզում ինձ հետ բաժանվել, դառնալով ասաց Յրինին կրնո՞ջր:

—Նո կը բարձրանամ աշտարակի գլուխը և կը դիտեմ այնտեղից մեր կուրն, և երբ նկատեցի, որ դու ընկար, այն ժամանակ կը վառեմ ես քո յուղարկաւորութեան ջահը և կը ձգեմ նրան վառօղի շտեմարանը. այն ժամանակ թող թշնամին տիրէ աւերակներին, եթէ կամենում է:

—Մեռի՛ր ուրեմն, դիւցազնուհի՛, բացականչեց Յրինին. քո անունը անմոռաց կը մնայ մինչ ցկատարած աշխարհի:

Պաշարող թուրքերի ձայները խլացրին իշ-


խանի խօսքերը, իշխանը խլեց զինւորի ձեռքից դրօշակը, ամից Եւրանիչին ու վերջին անգամ գրկելով Եւփան «Տասն+ Բարե Սիգիդ, Տասն+ Բարե ընկերե՛ր, Երեւե՛ն+ Կայրենի երկրի և Կառաքի Կամար» ասելով, վայր ձգեց կամուրջը և բանալով դռները, հրամայեց Թնդանօթները բաց թողնել:

Օխի քուլաները րօպէսպէս ծածկեցին կամուրջով վազող հունգարացիներին.... իսկ երբ նրանք հասան դաշտը, սկսվեց սարսափելի յուսահատական ճակատամարտը.....

Իսկ Եւփան վառած ջահը ձեռքին, փայլատակված նրա լոյսով, կանգնած է աշտարակի գլխին և անշարժ դիտում է մարտնչողներին:

Իրար հակեից ընկնում են հարիւրաւոր թուրքերը, ընկնում են և՛ հարիւրաւոր հունգարացիները. Եւրանիչը բոլորի առաջ դրօշակը ձեռին առիւծի պէս կռվում է..... ահա ընկաւ ծերունի Սլապին, նրան հակեից Հապրուղօփիչը.....

Իսկ Եւփան աշտարակի վրա դեռ կանգնած նայում է..... բայց ահա ընկաւ և՛ վերջապէս



քաջ Եւրանիչը և նրա հետ շատ հունգարացիները. և նա, Եւփան, տեսնում է ինչպէս կուռողներին միջով համարձակ անցնում է դէպի երիտասարդի դիակը, իր թեթև թրով աջ ու ձախ կոտորելով թշնամիներին, փայլուն սուկեզօծ շորերով մի ծերունի, տեսնում է ինչպէս հասաւ նա դիակի մօտ և թռաւ միւս կողմը. բայց այդ րօպէին մի թուրք իր թրով նրա գլուխը ձեղքում է և փայլուն շորերով ծերունին ընկնում է երիտասարդի դիակի վրա:

Այդ Ժամանակ Եւփան իր տեղից ցատկելով ջահը գցեց վառօղի պահեստի մէջ:

Նրկիրը սարսափելի դղրդաց, և երբ ծուխը՝ որը ծածկել էր թէ՛ ամրոցը և թէ՛ կրոււի դաշտը, ցրվեց,— փառաջէն Սիգիդի տեղ սկսեցին երևալ միմիայն մսվող աւերակների կոյտերը.....



4489

2013

2013

